ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

THE HEAD OF THE GENERAL DEPARTMENT OF LOGISTIC SUPPORT OF MINISTRY OF DEFENCE OF THE REPUBLIC OF ARMENIA
НАЧАЛЬНИК ГЛАВНОГО УПРАВЛЕНИЯ МАТЕРИАЛЬНО-ТЕХНИЧЕСКОГО ОБЕСПЕЧЕНИЯ МИНСТЕРСТВА ОБОРОНЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

0044, ք.Երևան, Բագրևանդի փ.5
E-mail: depart@mil.am
Հեռ.՝ (+374 10) 29-43-97

5 Bagrevand str., 0044 Yerevan
Ереван, 0044, Багреванда 5,
E-mail: depart@mil.am
Tel.Тел. (+374 10) 29-43-97

№ Նստեն/186

«22» 01 2021 թ.

«ՎԱՆԳԱԿ» ՍՊԸ (ՀՎՀՀ 01016987) տնօրեն
Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ
հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ավան-Առինջ, 2 մկշ. 3/3շ., 36
էլ. հասցե՝ vangak1@mail.ru

ՀՀ պաշտպանության նախարարության և «ՎԱՆԳԱԿ» ՍՊ ընկերության միջև 15.09.2020թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-20-7/53-5 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում Ձեր ընկերությունը 2020թ. 4-րդ եռամսյակում մինչև նոյեմբերի 30-ը պետք է մատակարարեր 220 հատ Գլխարկներ /Գլխարկ՝ ձմեռային, բնական կարակուլից/ ապրանքատեսակ, որը չի մատակարարել:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2021թ. հունվարի 21-ին միակողմանի լուծել է վերոնշյալ Պայմանագիրը (Համաձայնագիրը):

Տեղեկացնում եմ, որ «ՎԱՆԳԱԿ» ՍՊ ընկերությունը պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 60 192 ՀՀ դրամ՝ որպես տույժ՝ Պայմանագրի 6.2 կետի համաձայն, ինչպես նաև վերոնշյալ ժամկետում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին ենթակա է գանձման 752 400 ՀՀ դրամ՝ որպես տուժանք (պայմանագրի կատարման ապահովում) և ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900008000664 հաշվեհամարին ենթակա է գանձման 7 524 000 ՀՀ դրամ որպես որակավորման ապահովում:

Ն. ՅՈՒԼՉՅԱՆ